Ardshinbank

Տեղեկատվական թերթիկ՝ Optimal սակագնային փաթեթի շրջանակում տրամադրվող ծառայությունների վերաբերյալ

1. Անհատական մենեջերի ծառայություն

Սույն փաթեթի շրջանակում Ձեզ տրամադրվում է անհատական մենեջերի ծառայությունից օգտվելու հնարավորություն, որը ենթադրում է աշխատանքային էլ. փոստով, Viber, WhatsApp, Telegram և այլ կապի միջոցով հաճախորդի սպասարկում, հեռավար պատվիրված գործարքների կատարում և այլն:

2. Բանկային հաշվի բացում, Mastercard Standard, Visa Classic կամ Visa Gold դեբետային քարտի տրամադրում, Ibanking ծառայության ակտիվացում

Բանկային հաշվի բացման, Mastercard standard, Visa Classic կամ Visa Gold դեբետային քարտի ստացման և/կամ Ibanking ծառայության ակտիվացման համար՝ անհրաժեշտ է Բանկին ներկայացնել դիմում՝ chat-bot-ի կամ զանգի միջոցով դիմելով Ձեր անհատական մենեջերին կամ այցելելով Բանկի մոտակա մասնաճյուղ:

3. Գործարքների հեռավար պատվիրում և հաստատում Mobile Banking հավելվածով

Դուք կարող եք գրավոր կամ բանավոր կերպով դիմել Բանկ՝ Ձեր անհատական մենեջերին և պատվիրել գործարք: Անհատական մենեջերի կողմից գործարքը կատարվելուց հետո Ձեր Mobile հավելվածում կստանաք push notification՝ գործարքի մանրամասներով, որը Ձեր կողմից հաստատվելու դեպքում՝ գործարքը կկատարվի, իսկ մերժվելու դեպքում՝ կչեղարկվի և ընթացք չի ստանա: